ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Քաղաքացիական գործ թիվ *ԵԴ2/15145/02/23*

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԵՎ ԱՊԱՑՈՒՅՑ ՊԱՀԱՆՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Նախագահությամբ դատավոր ԱՆՆԱ ՇԻԼԱՋՅԱՆԻ

2023 թվականի հուլիսի 28-ին քաղաք Երևան

քննարկելով «Ա-ԷՆ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊ ընկերության տնօրեն Ա. Պողոսյանի կողմից ներկայացված հայցադիմումը վարույթ ընդունելու և ապացույց պահանջելու հարցերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

«Ա-ԷՆ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊ ընկերության տնօրեն Ա. Պողոսյանը հայցադիմում է ներկայացրել դատարան ընդդեմ Երևանի քաղաքապետարանի, երրորդ անձ՝ ՀՀ ֆինանսների նախարարության՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ Երևանի քաղաքապետի 12.06.2023 թվականի թիվ N-1532 Ա որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին:

Հայցադիմումը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Դատարան) գրասենյակ է մուտքագրվել 17.07.2023 թվականին, իսկ դատավոր Ա. Շիլաջյանի աշխատակազմին է հանձնվել 19.09.2023 թվականին:

Դատավորի աշխատակազմը հաղորդակցության միջոցով 24.07.2023 թվականին տեղեկացրել է հայցվորին հայցադիմումում առկա թերության, մասնավորապես՝ հայցադիմումին կից բացակայել է օրենքով սահմանված կարգով վճարված պետական տուրքի՝ 50.000 ՀՀ դրամ գումարի, վճարված լինելը հաստատող վճարման անդորագիրը, իսկ չվճարված պետական տուրքի մասով չի ներկայացվել միջնորդություն:

27.07.2023 թվականին հայցվորը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածի 1-ին մասի 1.2-րդ կետով սահմանված կարգով վերացրել է նույն հոդվածի 1.1-ին մասում նշված հայցադիմումում առկա ձևական թերությունը (հիմք՝ «Ա-ԷՆ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊ ընկերության տնօրեն Ա. Պողոսյանի կողմից ներկայացված թիվ Մ-25796/23 դիմումը):

ԱՆՆԱ ՇԻԼԱՋՅԱՆ ԴԱՏԱՎՈՐ

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը լուծում է այն ներկայացվելուց հետո՝ եռօրյա ժամկետում:

Ուսումնասիրելով հայցադիմումը և կից փաստաթղթերը՝ Դատարանը գտնում է, որ «Ա-ԷՆ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊ ընկերության տնօրեն Ա. Պողոսյանի կողմից ներկայացված հայցադիմումը ներկայացվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121-րդ, 122-րդ հոդվածների և 27.2-րդ գլխով նախատեսված պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հայցադիմումը վարույթ ընդունելու հետ միաժամանակ դատարանը կայացնում է որոշում՝ պատասխանողից տվյալ գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները պահանջելու մասին:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը կատարվում է պատասխանողի կողմից որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

Սույն մասով նախատեսված ժամկետում պատասխանողի կողմից ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշման պահանջները չկատարվելու դեպքում գործը քննվում է դրանում առկա ապացույցների հիման վրա, իսկ հայցվորի վկայակոչած այն փաստերը, որոնք ենթակա են հաստատման պատասխանողի տիրապետման տակ գտնվող ապացույցներով, համարվում են հաստատված:

Հաշվի առնելով վերոգրյալը, Դատարանը գտնում է, որ Երևանի քաղաքապետարանից պետք է պահանջել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված՝ տվյալ գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:

Դատարանը հարկ է համարում պարզաբանել, որ սույն որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում պատասխանող ՀՀ քաղաքաշինության կոմիտեն կարող է ներկայացնել տվյալ գնման գործընթացի հետ կապված իր տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները միայն ապացույցները պահանջելու որոշման կատարման ընթացքում, բացառությամբ այն դեպքերի, երբ հիմնավորում է ապացույցի ներկայացման անհնարինությունը՝ իրենից անկախ պատճառներով, ինչպես նաև հայցադիմումի պատասխանը ներկայացվում է հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124-րդ, 188-րդ, 199-րդ, 200-րդ հոդվածներով և 27.2 գլխով նախատեսված հոդվածներով Դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Ա-ԷՆ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊ ընկերության տնօրեն Ա. Պողոսյանի կողմից ներկայացված հայցադիմումն ընդունել վարույթ:

2. Երևանի քաղաքապետարանից պահանջել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:

3. Ապացույցներ պահանջելու վերաբերյալ սույն որոշման 2-րդ կետի պահանջները պատասխանողի կողմից ենթակա է կատարման սույն որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

4. Երևանի քաղաքապետարանն իրավունք ունի հայցադիմումի պատասխան ներկայացնել հայցադիմումը վարույթ ընդունելու մասին սույն որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

5. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

ԴԱՏԱՎՈՐ՝ **Ա. ՇԻԼԱՋՅԱՆ**

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Քաղաքացիական գործ թիվ *ԵԴ2/15145/02/23*

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՅՑԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԻՋՈՑ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆԸ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՌՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

նախագահությամբ դատավոր ԱՆՆԱ ՇԻԼԱՋՅԱՆԻ

2023 թվականի հուլիսի 28-ին քաղաք Երևան

քննարկելով «Ա-ԷՆ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊ ընկերության տնօրեն Ա. Պողոսյանի կողմից ներկայացված հայցի ապահովման միջոց կիրառելու միջնորդությունը,

Պ Ա Ր Զ Ե Ց

«Ա-ԷՆ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊ ընկերության տնօրեն Ա. Պողոսյանը հայցադիմում է ներկայացրել դատարան ընդդեմ Երևանի քաղաքապետարանի, երրորդ անձ՝ ՀՀ ֆինանսների նախարարության՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ Երևանի քաղաքապետի 12.06.2023 թվականի թիվ N-1532 Ա որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին:

Հայցադիմումը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի գրասենյակ է մուտքագրվել 17.07.2023 թվականին, իսկ դատավոր Ա. Շիլաջյանի աշխատակազմին է հանձնվել 19.09.2023 թվականին:

Դատավորի աշխատակազմը հաղորդակցության միջոցով 24.07.2023 թվականին տեղեկացրել է հայցվորին հայցադիմումում առկա թերության, մասնավորապես՝ հայցադիմումին կից բացակայել է օրենքով սահմանված կարգով վճարված պետական տուրքի՝ 50.000 ՀՀ դրամ գումարի, վճարված լինելը հաստատող վճարման անդորագիրը, իսկ չվճարված պետական տուրքի մասով չի ներկայացվել միջնորդություն:

27.07.2023 թվականին հայցվորը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածի 1-ին մասի 1.2-րդ կետով սահմանված կարգով վերացրել է նույն հոդվածի 1.1-ին մասում նշված հայցադիմումում առկա ճանաչման թերությունը (հիմք՝ «Ա-ԷՆ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊ ընկերության տնօրեն Ա. Պողոսյանի կողմից ներկայացված թիվ Մ-25796/23 դիմումը):

ԱՆՆԱ ՇԻԼԱՋՅԱՆ ԴԱՏԱՎՈՐ

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Ա. Շիլաջյանի (այսուհետ՝ Դատարան) 28.07.2023 թվականի որոշմամբ հայցադիմումն ընդունվել է վարույթ:

Հայցվորի ներկայացուցչի կողմից հայցադիմումին կից ներկայացվել հայցի ապահովման միջոց կիրառելու վերաբերյալ միջնորդություն:

Դատարան ներկայացված միջնորդությամբ խնդրել է արգելել կամ կասեցնել՝ «Ա-ԷՆ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊ ընկերությանը՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու Երևանի քաղաքապետի 12.06.2023 թվականի թիվ N-1532 Ա որոշման կատարումը, մինչև սույն գործով վերջնական դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը:

Ուսումնասիրելով միջնորդությունը՝ Դատարանը գտնում է, որ այն ենթակա է մերժման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 128-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ առաջին ատյանի դատարանը գործին մասնակցող անձի միջնորդությամբ կիրառում է հայցի ապահովման միջոցներ, եթե նման միջոցներ չձեռնարկելը կարող է անհնարին դարձնել, դժվարացնել դատական ակտի կատարումը, հանգեցնել վեճի առարկա հանդիսացող գույքի փաստացի կամ իրավական վիճակի փոփոխության կամ էական վնաս հասցնել միջնորդություն ներկայացնող անձին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 129-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հայցի ապահովման միջոցը պետք է համաչափ լինի ներկայացված պահանջին և հայցի ապահովմամբ հետապնդվող նպատակին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 130-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հայցի ապահովման միջոց կիրառելու մասին միջնորդությունը պետք է պարունակի հայցի ապահովման միջոց կիրառելու հիմքի առկայության վերաբերյալ հիմնավորումներ և նշում հայցի ապահովման միջոցի կամ միջոցների մասին:

ՀՀ Սահմանադրական դատարանը 24.11.2020 թվականի թիվ ՍԴՈ-1561 որոշմամբ արձանագրել է, որ հայցի ապահովման միջոց կիրառելու օրենսդրական հնարավորություն նախատեսվել է այն անձանց իրավունքների պաշտպանությունն ապահովելու և երաշխավորելու համար, որոնք տարբեր պահանջներով դիմել են դատարան՝ ակնկալելով իրենց խնդիրների լուծում, սակայն, կախված հանգամանքներից՝ կան ռիսկեր, որոնք կարող են դժվարացնել կամ անհնարին դարձնել դատական ակտի կատարումը, այդ իսկ պատճառով անհրաժեշտություն է առաջանում ձեռնարկել լրացուցիչ քայլեր, որոնք կապահովեն հետագայում կայացված դատական ակտի պատշաճ կատարումը: Ուստի նման ինստիտուտի նախատեսումն ինքնին իրավաչափ և ընդունելի է պայմանով, որ առկա են համարժեք և բավարար հիմքեր՝ մյուս կողմի իրավունքները և ազատությունները մինչև դատական ակտի կայացումը սահմանափակելու համար: Որպեսզի դատարանը բավարարի հայցի ապահովման միջոց կիրառելու մասին միջնորդությունը, պետք է միջնորդությամբ ներկայացված հանգամանքների լույսի ներքո հնարավոր լինի, որ նման միջոցներ չձեռնարկելը կարող է անհնարին դարձնել կամ դժվարացնել համապատասխան դատական ակտի պատշաճ կատարումը՝ հայցվորի պահանջը բավարարելու դեպքում:

Վճռաբեկ դատարանը նշել է, որ հայցի ապահովման դատավարական ինստիտուտը նախատեսված է դատարանի կողմից նախապես ձեռնարկվող որոշակի

միջոցներով հնարավոր բացասական հետևանքներից պաշտպանել հայցվորի (ապագա հնարավոր պահանջատիրոջ) իրավունքները և օրինական շահերը: Հաշվի առնելով հայցի ապահովման դատավարական ինստիտուտի նպատակը՝ օրենսդիրը սահմանել է, որ հայցը բավարարելու մասին վճիռ կայացվելու դեպքում հայցի ապահովման միջոցները պահպանվում են մինչև վճռի կատարումը, ինչը դատական ակտի կատարման կարևորագույն երաշխիք է, իսկ հայցը մերժելու մասին վճիռ կայացվելու դեպքում՝ մինչև վճռի օրինական ուժի մեջ մտնելը: Օրենսդիրը միաժամանակ, հաշվի առնելով հայցի ապահովման դատավարական ինստիտուտի առանձնահատկությունները, հստակ սահմանել է, որ հայցի ապահովման միջոց ձեռնարկելու, հայցի ապահովումը վերացնելու, ինչպես նաև հայցի ապահովման մեկ միջոցը մեկ այլ միջոցով փոխարինելու կամ հայցի ապահովման միջոցը ձևափոխելու լիազորությամբ օժտված է բացառապես դատարանը, որն իր այդ լիազորությունն իրականացնում է համապատասխան որոշում ընդունելով (տե՛ս, ՀՀ վճռաբեկ դատարանի 18.07.2014 թվականի թիվ ՎԴ/2127/05/11 գործով որոշումը):

Այսպիսով, հայցի ապահովման դատավարական ինստիտուտի կարևորագույն նպատակն է ապահովել որոշակի երաշխիքներ հարուցված հայցով հետագա վճռի կատարումն ապահովելու և դատավարության մասնակիցների օրինական շահերը բացասական հետևանքներից պաշտպանելու համար:

Այսինքն՝ հայցի ապահովում ձեռնարկվում է այն դեպքում, երբ նման միջոցներ չձեռնարկելը կարող է անհնարին դարձնել կամ դժվարացնել դատական ակտի կատարումը կամ կարող է հանգեցնել վեճի առարկա հանդիսացող գույքի վիճակի վատթարացմանը:

Վերոգրյալ իրավանորմի վերլուծությունից բխում է, որ հայցի ապահովումը դատարանի կողմից կիրառվող օրենքով նախատեսված դատավարական միջոց է, որի նպատակն է հայցը բավարարելու դեպքում երաշխիքներ ապահովել հարուցված հայցով ապագա վճռի կատարման համար:

Հայցի ապահովման միջոցի՝ որպես ապագա վճռի կատարման երաշխիքներ ապահովելու դատավարական միջոցի կիրառման համար ***բավարար չէ միայն օրենքով նախատեսված հիմքերի վկայակոչումը***, այն պետք է պատճառաբանվի և յուրաքանչյուր գործով պատճառաբանությունները պետք է ներկայացվեն տվյալ գործի առանձնահատկությունների հաշվառմամբ:

Սույն գործով ներկայացված հայցի ապահովման միջոց կիրառելու մասին միջնորդությունը հայցվորի ներկայացուցիչը փորձել է հիմնավորել այն փաստարկներով, որ Հայցվորին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պարագայում «Ա-ԷՆ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊ ընկերությունը կզրկվի պետական գնումների մրցույթներին մասնակցելու հնարավորությունից, և արդյունքում այս հայցի ապահովման միջնորդությունը չբավարարելու դեպքում մինչև սույն գործով դատական ակտ կայացնելը չի կարողանալու մասնակցել որևէ պետական գնման մրցույթի, ինչը էական վնաս կհասցնի «Ա-ԷՆ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊ ընկերությանը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Սույն հոդվածի 1-ին մասի 6-րդ կետում նշված ցուցակը, այդ թվում՝ դուսերեն կարգում և հրապարակում է լիազորված մարմինը: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված

որոշման հիման վրա: Սույն մասում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող տասն օրվա ընթացքում: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվան հաջորդող հինգ օրվա ընթացքում, *իսկ որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգ օրվա ընթացքում*, եթե դատական քննության արդյունքով որոշման կատարման հնարավորությունը չի վերացել: Մասնակիցը նշված ցուցակում ընդգրկվում է ներառվելու օրվան հաջորդող օրվանից երկու տարի ժամկետով:

Դատարանը արձանագրում է, որ վերոնշյալ իրավանորմի վերլուծությունից պարզ է դառնում, որ գնումների գործընթացի կարգավորումը և համակարգումն իրականացնող լիազորված մարմինը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում մասնակցին չի ներառում գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում մինչև տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգ օրվա ընթացքում:

Սույն դեպքում «Ա-ԷՆ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊ ընկերության կողմից հայցադիմում է ներկայացվել Երևանի քաղաքապետի կողմից 12.06.2023 թվականի թիվ N-1532 Ա որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, որը Դատարանի կողմից ընդունվել է վարույթ և օրենքով սահմանված կարգով էլեկտրոնային փոստի միջոցով ուղարկվելու է գնումների գործընթացի կարգավորումը և համակարգումն իրականացնող լիազորված մարմնին, որն էլ Դատարանի նշված որոշումը ստանալուց հետո «Ա-ԷՆ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊ ընկերությանը չի ներառելու գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում մինչև տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգ օրվա ընթացքում:

Որպես հայցի ապահովման միջոց կիրառելու հիմքի առկայության վերաբերյալ հիմնավորումներ նշվել է, որ Հայցվորը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պարագայում «Ա-ԷՆ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊ ընկերությունը կզրկվի պետական գնումների մրցույթներին մասնակցելու հնարավորությունից, և արդյունքում այս հայցի ապահովման միջնորդությունը չբավարարելու դեպքում մինչև սույն գործով ուժի մեջ մտնելու դեպքը կայացնելը չի կարողանալու մասնակցել որևէ պետական գնման մրցույթի, դրանք էական վնաս կհասցնի «Ա-ԷՆ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊ ընկերությանը:

Հիմք ունենալով վերոգրյալ իրավական նորմերը և դրանք համադրելով հայցի ապահովման միջոց կիրառելու հիմքի առկայության վերաբերյալ հիմնավորումների հետ՝ Դատարանն գտնում է, որ հայցվող հայցի ապահովման

միջոցի չկիրառման արդյունքում վրա հասնող հետևանքների վերաբերյալ հայցվորի ներկայացուցչի կողմից ներկայացված պնդումներն ունեն ենթադրական բնույթ, իսկ հնարավոր հետևանքների առաջացման հնարավորության վերաբերյալ հայցվորի կասկածները կամ հավանական հետևությունները բավարար հիմք չեն կարող հանդիսանալ դատարանի կողմից հայցի ապահովման միջոցներ կիրառելու համար:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 131-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ հայցի ապահովման միջոց կիրառելու վերաբերյալ միջնորդությունը լրիվ կամ մասնակի մերժվում է, եթե բացակայում են հայցի ապահովման միջոց կիրառելու հիմքերը:

Այսպիսով, ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 128-րդ, 131-րդ, 199-րդ, 200-րդ, 361-րդ և 362-րդ հոդվածներով, Դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Ա-ԷՆ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊ ընկերության տնօրեն Ա. Պողոսյանի միջնորդությունը՝ հայցի ապահովման միջոց կիրառելու վերաբերյալ, մերժել:

2. Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից:

3. Որոշումը կարող է բողոքարկվել Վերաքննիչ դատարան այն ստանալուց հետո յոթնօրյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ՝ **Ա. ՇԻԼԱՋՅԱՆ**